



Կարգապահական գործ թիվ ԿԳ-21012

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հոկտեմբերի 12-ի թիվ 291-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/173-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՈՐԳԻ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Պավել Գյուլումյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարգսյանի, Կարեն Մեծլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Գայանե Դեմիրջյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի, քննության առնելով փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանին (արտոնագիր՝ 1798) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության վարչական շրջանի դատախազ Դ. Վեքիլյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում քննված թիվ 63202719 քրեական գործով մեղադրյալ Զոհրաբ Ասատրյանի պաշտպան Գեորգի Գրիգորի Մելիքյանը, 29.03.2021թ. ծանոթանալով քրեական գործի նյութերին, միջնորդություն է հարուցել Զ. Ասատրյանի կողմից 19.12.2021թ. ՀՀ ոստիկանության ՃՈ ինքնակամ ներկայանալու մասին ՀՀ ոստիկանության ՃՈ տեսուչ Անդրանիկ Շահբազյանի կազմած արձանագրությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու և Զ. Ասատրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ:

Նույն օրը վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել միջնորդությունը մերժելու մասին:

Վերը նշված որոշման դեմ բողոք է ներկայացրել Զ. Ասատրյանի պաշտպան Գեորգի Գրիգորի Մելիքյանը՝ բողոքում համապատասխանաբար նշելով.

«...Թեև հույս չունեմ նման ապօրինի քննության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից սույն բողոքը բավարարվելու

համար, այնուհանդերձ սա խայտառակություն է և քննչական և դատախազական մարմինների կողմից հանցագործություն կատարելով հանցագործություն բացահայտելու վառ օրինակ:

Եթե անլուրջ վերաբերվեք և նման ապօրինի եղանակով մերժեք բողոքս, ապա խոսք եմ տալիս դատավարության ընթացքում սա լինելու է արդեն ոչ թե քննիչի, այլ նաև դատախազի հրապարակային պարսավանքի պահր:

Վրդովմունքը սույն քրեական գործի առկայությունն է, որում Ձոհրաբ Ասատրյանի առնչությունը հաստատող որևէ տվյալ չի պարունակում և առկա են բացառապես անթույլատրելի ապացույցներ և անմեղությունը հաստատող ապացույցներ, որոնք չտեսնելու տալը հանգեցնելու է թե՛ քննիչի, թե՛ դատախազի քրեական պատասխանատվության:

(....)

Նախ անդրադառնամ մեղադրանքի ձևակերպմանը, որտեղ առկա են պաշտոնական կեղծիքներ, շինծու մեղադրանք, որոնք չեն բխում առհասարակ ապացույցներից:

(....)

Պարոն Վերիլյան, դատարանը մեղադրանքի փաստական նկարագրում սպանության փորձի արարքի շարժառիթ նկարագրված չլինելու հիմքով հիմնավոր կասկածի առկայությունը բացառելը պայմանավորել է հենց քննությամբ այդպիսին պարզված չլինելու հիմնավորմամբ, այնինչ դրանից հետո քննությամբ կրկին այդպիսին պարզված չլինելով Ձոհրաբին շարունակում եք մարդասպանի պիտակ կպցնել, որն ինքնին հանցագործություն է: Անհրաժեշտ է սթափվել դատարանի ապրակից հետո և անհապաղ վերականգնել դատախազության նկատմամբ վստահությունը, բավարարել բողոքը և դադարացնել հետապնդումը, հակառակ դեպքում հրապարակային դատավարության ընթացքում սա լինելու է արդեն իսկ դատախազության խայտառակությունը»:

Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 12.05.2021թ. թիվ 90-Ա/ԿԳ-21012 որոշման հիման վրա Փաստաբանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.3 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-21012):

17.05.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ջոյա Սակովային (այսուհետ նաև՝ Նախապատրաստող):

3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն և պնդել դիմումով իր հայտնածը:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Գեորգի Մելիքյանի կողմից 23.04.2021թ. ներկայացրած բացատրությամբ վերջինս ըստ էության ընդունել է իր կողմից դիմումում նշված արտահայտությունները կատարելը, սակայն հայտնել է, որ այդ ձևակերպումներն առանձնացվել են բողոքի ընդհանուր նկարագրից և փորձ է կատարվել թողնել տպավորություն, թե իբր դրանք դուրս են կոռեկտության սահմաններից:

Փաստաբանը նշել է, որ առաջնորդվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով:

Ըստ փաստաբանի՝ այն ձևակերպումները և արտահայտությունները, որոնք դատախազը վիճարկում է հիմնավորված են ոչ միայն քրեական գործի տվյալներով, այլև դատարանի որոշմամբ և ըստ էության իր կողմից դեռևս մեղմ են որակվել, քանի որ դատախազը ամբողջ նախաքննության ընթացքում դրսևորել է անգործություն ...:

Պալատի խորհրդի նիստին Փաստաբանը ներկայացել է և հաստատել է իր կողմից նախկինում ներկայացված դիրքորոշումը:

3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 14.07.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 15.07.2021թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 12.10.2021թ. ժամը 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ **Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված

է համարում հետևյալ փաստը.

1. Փաստաբանի Գ.Մելիքյանը քրեական հետապնդման մարմնի կայացրած որոշման դեմ ներկայացրել է բողոք:

Բողոքում նշված է եղել հետևյալ արտահայտությունները.

«...Թեև հույս չունեմ նման ապօրինի քննության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից սույն բողոքը բավարարելու համար, այնուհանդերձ սա խայտառակություն է և քննչական և դատախազական մարմինների կողմից հանցագործություն կատարելով հանցագործություն բացահայտելու վառ օրինակ:

Եթե անլուրջ վերաբերվեք և նման ապօրինի եղանակով մերժեք բողոքս, ապա խոսք եմ փալիս դատավարության ընթացքում սա լինելու է արդեն ոչ թե քննիչի, այլ նաև դատախազի հրապարակային պարսավանքի պահը:

Վրդովմունքը սույն քրեական գործի առկայությունն է, որում Ջոհրաբ Ասատրյանի առնչությունը հաստատող որևէ փվյալ չի պարունակում և առկա են բացառապես անթույլատրելի ապացույցներ և անմեղությունը հաստատող ապացույցներ, որոնք չտեսնելու փալը հանգեցնելու է թե՛ քննիչի, թե՛ դատախազի քրեական պատասխանատվության:

(....)

Նախ անդրադառնամ մեղադրանքի ձևակերպմանը, որտեղ առկա են պաշտոնական կեղծիքներ, շինծու մեղադրանք, որոնք չեն բխում առհասարակ ապացույցներից:

(....)

Պարոն Վեքիլյան, դատարանը մեղադրանքի փաստական նկարագրում սպանության փորձի արարքի շարժառիթ նկարագրված չլինելու հիմքով հիմնավոր կասկածի առկայությունը բացառելը պայմանավորել է հենց քննությամբ այդպիսին պարզված չլինելու հիմնավորմամբ, այնինչ դրանից հետո քննությամբ կրկին այդպիսին պարզված չլինելով Ջոհրաբին շարունակում եք մարդասպանի պիտակ կպցնել, որն ինքնին հանցագործություն է: Անհրաժեշտ է սթափվել դատարանի ապօրինից հետո և անհապաղ վերականգնել դատախազության նկատմամբ վստահությունը, բավարարել բողոքը և դադարացնել հետապնդումը, հակառակ դեպքում հրապարակային դատավարության ընթացքում սա լինելու է արդեն իսկ դատախազության խայտառակությունը»:

Սույն փաստը հաստատվել է, քանի որ կողմերից որևէ մեկը այդ հարցի կապակցությամբ չի ներկայացրել հակառակը հավաստող ապացույցներ և առարկություններ:

6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 28.07.21թ. տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանը (արտոնագիր թիվ՝ 1798) փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 14.07.2014թ., և 2015-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է մեկ կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական գործ, որը կարճվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պայմանադրանքային:

Կանոնագրքի 6.1.3 ենթակետի համաձայն՝ Մինչդարական վարույթում փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում, իսկ դատավարության մասնակիցների (մեղադրող կողմի և այլն) գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով:

Վերոնշյալ ենթակետերով փաստաբանի վրա դրվում է պարտավորություն հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում:

Միևնույն ժամանակ փաստաբանը նաև պարտավոր է առավելագույն ջանքերը դրսևորել իր վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի սույն երկակի պարտականությունը բխում է փաստաբանի սոցիալական դերից և նշանակությունից և դրանով պայմանավորված՝ փաստաբանի պատասխանատվությունից մի կողմից վստահորդի առջև, իսկ մյուս կողմից՝ պետական մարմինների, որի գործառույթների պատշաճ իրականացմանը նպաստելուն է նպատակաուղղված փաստաբանի գործունեությունը: Փաստաբանը կարող է պատշաճորեն և արդյունավետորեն ներկայացնել և պաշտպանել իր վստահորդի շահերը միայն այն դեպքում, երբ ինքն ազատ է դատարանի, պետական այլ մարմինների և մասնավոր անձանց անօրինական և անհամաչափ ազդեցությունից: Միևնույն ժամանակ փաստաբանի սոցիալական կարգավիճակից բխում է նրա առաքելությունը նպաստել արդարադատության իրականացմանը, որը կարող է պատշաճ իրացվել, եթե փաստաբանը դատավարության մասնակիցների հետ հարաբերություններում գործի օրինականության և փաստաբանական էթիկայի շրջանակներում:

Պալատի խորհրդի նշյալ եզրահանգմանը համահունչ է նաև միջազգային պրակտիկան:

Եվրոպայում փաստաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների հռչակագրի (այսուհետ՝ նաև Հռչակագիր) «Ծ» սկզբունքի համաձայն՝ իր վստահորդին խորհրդատվություն տրամադրելիս կամ վստահորդին ներկայացնելիս փաստաբանը պետք է լինի ազատ քաղաքականապես, տնտեսապես և մտավոր առումով: Դա նշանակում է, որ փաստաբանը պետք է անկախ լինի պետական կամ այլ ազդեցիկ շահերից...

Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև ԵՓՎԿ) 2.1.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանի բազմաթիվ պարտականություններ պայմանավորված են փաստաբանի բացարձակ անկախությամբ, ցանկացած ազդեցությունից ազատությամբ՝ հատկապես... արտաքին ճնշումից: Այդպիսի անկախությունը նույնչափ անհրաժեշտ է արդարադատության գործընթացի նկատմամբ վստահության համար, որքան դատավորի անկողմնակալությունը: Հետևաբար, փաստաբանը պետք է խուսափի իր անկախությանը որևէ խոչընդոտից և իր մասնագիտական չափորոշիչների ստորադատումից:

ԵՓՎԿ-ի 2.1.2 ենթակետի համաձայն՝ սույն անկախությունն անհրաժեշտ է ոչ դատական և դատական գործերով: Փաստաբանի խորհրդատվությունն անարժեք է, եթե կատարվում է...՝ ի պատասխան արտաքին ճնշման:

Վերոնշյալ միջազգային իրավական ակտերում պետական կամ արտաքին ճնշման ներքո հնարավոր ոչ իրավաչափ կամ անհամաչափ ազդեցությունը, որը կարող է սահմանափակել փաստաբանի անկախությունը իր վստահորդին իրականացնելիս:

Բացի այդ, Խորհուրդը գտնում է, որ դատավարության ընթացքում դատավարության տարբեր սուբյեկտների դիրքորոշումները կարող են չհամընկնել և առաջացնել հակասություն, որի հետևանքով փաստաբանն իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու ընթացքում կարող է հանդիպել որոշակի հակազդեցության:

Այս տեսանկյունից և ելնելով փաստաբանի գործունեության երաշխիքներից՝ որևէ փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու հարցը քննարկելիս փաստաբանը պետք է ունենա պաշտպանվածության բարձր իրավական շեմ:

Նման պայմաններում Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք բողոքում շարադրված արտահայտությունները նպատակ են հետապնդել անհարգալից վերաբերմունք դրսևորել դատախազության նկատմամբ, թե ուղղված են եղել վստահորդների համար ցանկալի արդյունքին հասնելուն:

Խորհուրդն արձանագրում է, որ չի հաստատվել այն փաստը, որ բողոքում նշված արտահայտությունները նպատակ էին հետապնդում անհարգալից վերաբերմունք դրսևորել դատախազության կամ քննիչի նկատմամբ և բողոքում շարադրված հանգամանքները նպատակ են հետապնդել լավագույնս ներկայացնել վստահորդի շահերը:

Ըստ էության, Փաստաբանը չի անդրադարձել դատախազի կամ քննիչի անձին, այլ վերլուծել է իր կարծիքով իրավական երևույթները և քրեական հետապնդման մարմնի՝ իր ընկալմամբ թույլ տված սխալները, որոնք թեև խիստ են, այդուհանդերձ անձնավորված չեն:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն անդրադառնալով փաստաբանների կողմից խոսքի և արտահայտման ազատության սահմանների առանձնահատկություններին՝ 21.06.2002թ. Աննա Նիկոլյան ընդդեմ Ֆինլանդիայի գործով կայացված որոշմամբ հստակ նշել է. «Չնայած փաստաբանները նույնպես իրավասու են հրապարակայնորեն մեկնաբանություններ ներկայացնել արդարադատության համակարգի վերաբերյալ, սակայն նրանց քննադատությունները չպետք է անցնեն թույլատրելի սահմանները: Այս տեսանկյունից պետք է հաշվի առնվի փարբեր շահերի միջև հավասարակշռությունը՝ մի կողմից հասարակության իրավունքը ստանալ տեղեկություններ դատական ակտերից բարձրացող հարցերի վերաբերյալ, մյուս կողմից արդարադատության իրականացման պատշաճ պահանջների և իրավաբանի մասնագիտության արժանապատվության միջև: ... Դիմումատուն մեղադրեց դատախազին ապօրինի վարքի մեջ, բայց այս քննադատությունն ուղղված էր պաշտպանության ռազմավարությանը, որը ենթադրաբար ընդրել էր փաստաբանը: Չնայած ընդրված որոշ ոչ ճիշտ պայմանների,

Դիմումատուի քննադատությունը սահմանափակվել է դատախազի ներկայացրած փաստարկներով ուղղված իր վստահորդի դեմ և ոչ թե դատախազի պրոֆեսիոնալ կամ այլ որակների դեմ: Այս դատավարական համարեքստում դատախազը պետք է հանդուրժողաբար վերաբերվեր Դիմումատուի՝ որպես պաշտպանի քննադատությանը: Դատարանը նաև արձանագրում է, որ քննադատությունը դատարանի դահլիճում է հնչել և ոչ թե օրինակ մամուլով: Այս տեսանկյունից Դիմումատուի իրավունքի սահմանափակումը պայմանավորված չի եղել հասարակական խիստ պահանջարկով»:

Նշված գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը հստակեցրել է փաստաբանի խոսքի ազատության սահմանները ներկայացնելիս ուշադրության արժանի շահերը, որոնց մեջ առանձնահատուկ դեր է հատկացրել այն քննադատությանը, որը վերաբերում է ոչ թե անձին, այլ նրա գործողությանը և նպատակ է հետապնդում պաշտպանել վստահորդի շահը: Նման հանգամանքների զուգորդման դեպքում ՄԻԵԴ-ը թույլատրելի է համարել փաստաբանների կողմից հնչեցրած քննադատական կարծիքները՝ այդ թվում ոչ միշտ քաղաքավարի ձևով (ընդգծումը Խորհրդինն է):

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա չէ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 6.1.3 ենթակետի պահանջներ պահանջների խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանի (արտոնագիր թիվ՝ 1798) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Պավել Գյուլումյան

**12 հոկտեմբերի 2021թ.
թիվ ԿԳ/173-Ա
ք. Երևան**